

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ՀԱՅԿ ԿՈՆՅԱՅԻ**

**ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ**

**ԻԵ. 00. 01 - «Կրոնի տեսություն և պատմություն (կրոնագիտություն)»  
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

**Ե Ր Ե Վ Ա Ն - 2014**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**

**ЕНГИБАРЯН АЙК КОЛЯЕВИЧ**

**ВЕЛИКАЯ РЕПАТРИАЦИЯ И АРМЯНСКАЯ ЦЕРКОВЬ**

**АВТОРЕФЕРАТ**

**диссертация на соискание ученой степени кандидата  
исторических наук по специальности  
25. 00. 01 «Теория и история религии (религиоведение)»**

**ЕРЕВАН - 2014**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:


Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր **Ռ. Հ. Վարդանյան**  
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Է. Գ. Մինասյան**, պատմական գիտությունների թեկնածու **Ա. Ա. Ստեփանյան**  
Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հունիսի 17-ին՝ ժամը 14:00-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի 068 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 0025, Աբովյան 52, ԵՊՀ 6-րդ մասնաշենքի դահլիճ:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. հունիսի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  Ա. Յ. Բալյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.


Научный руководитель՝ доктор исторических наук **Р. А. Варданян**  
Официальные оппоненты՝ доктор исторических наук, профессор **Э. Г. Минасян**, кандидат исторических наук **А. А. Степанян**

Ведущая организация՝ Институт Археологии и этнографии НАН РА

Защита диссертации состоится 17-го июля 2014 г., в 14:00 часов на заседании специализированного совета 068 при Ереванском государственном университете.

Адрес: г. Ереван 0025, Абовяна 52, ЕГУ, 6-ой корпус, актовый зал.  
С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан 16-го июня 2014 г.

Ученый секретарь специализированного совета՝ кандидат исторических наук, доцент  А. Ю. Баян

## ԱՅԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

**Թեմայի արդիականությունն ու գիտական նշանակությունը:** 1946-1948 թթ. զանգվածային հայրենադարձությունը, որպես Ետպատերազմյան խորհրդային քաղաքականություն, իր բոլոր դրսևորումներով հանդերձ աննախադեպ, իրարամերձ ու հակասական ընկալումների տեղիք տված մի երևույթ էր, որի արդյունքում Խորհրդային Հայաստան է ներգաղթել գրեթե 100 հազար մարդ: Ծավալով ու թվաքանակով դեռևս անգերազանցելի այս իրադարձությունը մինչ օրս համակողմանի և ամբողջական ուսումնասիրման չի արժանացել հայ պատմագիտության մեջ:

Ուսումնասիրվող թեմայի արդիականությունը պայմանավորված է Մեծ հայրենադարձի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետների ու մոտեցումների վերաիմաստավորման անհրաժեշտությամբ, երբեմն նաև դրանց մերժմամբ, ինչպես նաև պատմագիտական և եկեղեցաբանական փաստերի համադրմամբ ներգաղթի կազմակերպման գործում հայ եկեղեցու հսկայածավալ ու անփոխարինելի դերի բացահայտմամբ:

**Ատենախոսության նպատակն ու խնդիրները:** Ատենախոսության նպատակն է նորովի արժևորել Երկրորդ աշխարհամարտից անմիջապես հետո հայ եկեղեցու և խորհրդային իշխանությունների հարաբերությունների մերժեցման իրական պատճառները՝ եկեղեցամերձ դիրքորոշման փոխակերպումը եկեղեցահանդուրժ քաղաքականության, հայ եկեղեցու վավերագրերի, արխիվային նյութերի օգնությամբ վեր հանել Մեծ հայրենադարձի իրականացման գործում Հայ առաքելական եկեղեցու՝ էջմիածնի և Անթիլիասի կաթողիկոսությունների ու աշխարհասփյուռ թեմերի դերակատարությունը և ցույց տալ, որ հայրենադարձության իրագործման հաջողությունը բացառապես կախված է եղել Հայ առաքելական եկեղեցու մասնակցության բարձր աստիճանից:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Աշխատանքում առաջին անգամ առանձին պատմաեկեղեցաբանական քննության է ենթարկվում հայ եկեղեցու դերը հայոց պատմության կարևորագույն իրադարձություններից մեկի՝ Մեծ հայրենադարձության գործընթացներում: Անկողմնակալ ներկայացվում են ներգաղթի նկատմամբ հայ եկեղեցու բոլոր կողմերի (առաքելական, կաթոլիկ, բողոքական) դիրքորոշումներն ու գործունեությունը՝ մի կողմից Հայ առաքելական եկեղեցու՝ որպես գլխավոր ուղղորդողի, իսկ մյուս կողմից էլ Հայ կաթողիկե եկեղեցու՝ որպես հականերգաղթյալ տեսակետ ունեցողի դիրքերից: Հաջողվել է հակադրվել պատմագիտության մեջ ընդունված այն տեսակետին, որի համաձայն՝ հայրենադարձության կազմակերպմամբ խորհրդային իշխանությունները նպատակ ունեին, Թուրքիային տարածքային պահանջներ իրականացնելով, վերադարձնել հայկական հողերի մի մասը: Առաջին անգամ առաջ է քաշվում այն մոտեցումը, ըստ որի՝ ոչ թե հայրենադարձությունն է օգտագործվել Թուրքիային հողային պահանջ ներկայացնելու համար, այլ՝ հակառակը, հողային պահանջն է օգտագործվել հայրենադարձություն կազմակերպելու համար:

**Ատենախոսության կիրառական նշանակությունը:** Ատենախոսության հիմնական եզրահանգումները կարող են օգտագործվել հայ եկեղեցու պատմության Ետպատերազմյան ժամանակահատվածի ուսումնասիրման ու ամբողջացման համար: Պատմաեկեղեցաբանական հետազոտության արդյունքներն ու հիմնական

դրույթները հայրենադարձության թեմայի, ինչպես նաև սփյուռքագիտական հետազոտությունների համար ունեն գիտական կարևոր նշանակություն: Դրանք կարող են օգտագործվել պատմագիտական, եկեղեցաբանական և սփյուռքագիտական դասընթացներում՝ ըստ բուհական մագիստրոսական ծրագրերի:

**Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը:** Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնում՝ երաշխավորվելով պաշտպանության: Ատենախոսության հիմնական գաղափարներն ու հիմնադրույթներն արտացոլված են գիտական հանդեսներում և ժողովածուներում տպագրված հոդվածներում:

**Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն:** Որպես ուսումնասիրության աղբյուրներ են օգտագործվել արխիվային փաստաթղթեր, պատմագիտական մենագրություններ ու հետազոտություններ, ինչպես նաև եկեղեցաբանական վավերագրեր և բանասացներից զրառված օգտակար տեղեկություններ: Թեմայի հետազոտման համար կարևոր են եղել պարբերական մամուլի զանազան հրապարակումներ՝ ինչպես եկեղեցական, այնպես էլ հասարակական, քաղաքական, մշակութային բովանդակությամբ: Կարևորվել են նաև թեմային առնչվող տարաբնույթ հոդվածներ, վերլուծական հաղորդումներ, ինչպես նաև էլեկտրոնային կայքերի որոշ օգտակար տեղեկությունները: Վերջինիս առումով հարկ է առանձնացնել [hayrenadardz.org](http://hayrenadardz.org) կայքը, որն ամբողջապես նվիրված է հայրենադարձությանը: Այս կայքում առանձնացված է հայրենադարձությանը նվիրված մատենագիտությունը, որը լրացվել և ամբողջացվել է սույն ատենախոսական աշխատանքի արդյունքում:

**Ատենախոսության մեթոդական սկզբունքները:** Աշխատանքը կատարվել է պատմագիտական և եկեղեցաբանական հետազոտական մեթոդների համադրմամբ: Հաշվի առնելով թեմայի հետազոտման նոր տեսանկյունը՝ պատմաեկեղեցաբանական բնույթը, ինչպես նաև նրա սփյուռքագիտական նշանակությունն ու կարևորությունը՝ պատմական արխիվային զանազան փաստերին համադրվել են հայ եկեղեցու պատմության վավերագրերը՝ կաթողիկոսական կոնդակներ, շրջաբերականներ, թեմական նամակներ և այլն, ու դիտարկվել միասնաբար:

Մինչև այժմ Մեծ հայրենադարձությունը հիմնականում արժանացել է պատմագիտական, մասնակի դեպքերում՝ ազգաբանական հետազոտության: Առաջին անգամ հիշյալ երևույթը դառնում է նաև եկեղեցաբանական քննության նյութ, որի արդյունքում հնարավոր եղավ ճշգրտել հայրենադարձության գործընթացում հայ եկեղեցու դերի գնահատումը, հայրենադարձության կազմակերպման քաղաքական նպատակի ընկալումը, եկեղեցի-պետություն հարաբերությունների նոր մոդելի դիտարկումը և այլն:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից, 4 գլխից, ինչպես նաև եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Առանց հավելվածի՝ կազմում է 152 էջ:

**Ատենախոսության բովանդակությունը:** Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունն ու գիտական նշանակությունը, ատենախոսության

նպատակն ու խնդիրները, նրա գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը, ինչպես նաև համառոտ ներկայացվում են ուսումնասիրության աղբյուրներն ու ատենախոսության մեթոդական սկզբունքները:

Առաջին գլուխը վերնագրված է **«Հայրենադարձության պատմության և պատմագիտության ընդհանուր ակնարկ»**, որտեղ անդրադարձ է կատարվում հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած ժողովրդագրական խոշոր տեղաշարժերին, ապա ներկայացվում է հայրենադարձության պատմությունը՝ գլխավոր ուրվագծերով՝ հատկապես ուշադրություն դարձնելով Հայաստանի Առաջին Հանրապետության 1918-1920 թթ. և Խորհրդային Հայաստանի 1921-1936 թթ. ներգաղթին:

1921-1936 թթ. ներգաղթը տարբերվում էր նախորդից նրանով, որ 1918-1920 թթ. ներգաղթը յուրատեսակ շարունակությունն էր նախորդ տարիների խուռնեղան և խուճապահար փախստականության՝ պատերազմի արհավիրքներից և եղեռնից բխող հասկանալի պատճառներով: Եվ որքան էլ Առաջին Հանրապետությունը փորձեր կարգավորել այն, միևնույն է, կրում էր տարերային և անկազմակերպ բնույթ: Դրա համար էլ խորհրդային կարգերի ժամանակ կազմակերպված ներգաղթը առանձնացվում է իբրև խորհրդային հայրենադարձության առաջին փուլ:

Ի տարբերություն գալիք՝ 1946-1948 թթ. Մեծ հայրենադարձության՝ առաջին փուլում հայրենադարձությունը կրում էր բացարձակապես սահմանափակ բնույթ. պետությունը, ելնելով իր հնարավորություններից և սոցիալ-քաղաքական նպատակադրումներից, կանոնավորում և պլանավորում էր այդ ներգաղթը՝ այն համապատասխանեցնելով ներգաղթին նպաստող կազմակերպությունների ցուցաբերած նյութական օժանդակությանը:

Այսինքն, խորհրդային պետությունը ոչ թե հայրենադարձության կոչ էր անում և կազմակերպում ներգաղթ, այլ դրսից եկող կամավոր ներհոսքի համար սահմանում էր ներգաղթողների տարեկան չափաքանակ և պլանավորում նրանց տեղավորումը:

Այս գլխում առանձնակի կարևորվում են հայրենադարձության պատմագիտական արձագանքները և գնահատականները: Ներկայացվում են բոլոր այն հետազոտություններն ու ուսումնասիրությունները, որոնք ամբողջովին կամ մասամբ վերաբերում են հայրենադարձությանը՝ ցույց տալով, որ պատմագիտության մեջ ցայժմ գոյություն չունի Մեծ հայրենադարձության պատմակեղեցաբանական ուսումնասիրություն:

Երկրորդ գլուխը՝ **«Հայ եկեղեցին և խորհրդային կարգերը»**, բաժանված է երկու ենթագլխի: Առաջին ենթագլխում՝ **«Հայ եկեղեցին խորհրդային հայաժամանօքի տարիներին (1920-1941 թթ.)»**, անդրադարձ է կատարվում հայ եկեղեցու հայաժամանօքների ժամանակագրությանը, իշխանությունների հակաեկեղեցական ու հակակրոնական քաղաքականությանը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Հայ եկեղեցին խորհրդային նոր քաղաքականության ժրուռ (1941-1945 թթ.)»**, ներկայացվում են Հայ առաքելական եկեղեցու գործունեությունը և ներդրումը Երկրորդ աշխարհամարտում: Գևորգ արքեպիսկոպոս Չորեքյանը կոչով դիմում է աշխարհասփյուռ հայ ժողովրդին՝ նյութական աջակցություն կազմակերպելու և պայքարելու ընդհանուր թշնամու դեմ: Ներկայացվում են Հայ առաքելական եկեղեցու և խորհրդային իշխանությունների

հարաբերությունների բարելավման դրդապատճառները, առանձնահատուկ տեղ է հատկացվում Չորեքշաբթի գործունեությանը՝ ուշադրություն դարձնելով հատկապես եկեղեցի-պետություն հարաբերությունների նոր ձևավորվող մոդելին: Հայ պատմագիտության մեջ իշխող կարծիքի համաձայն՝ խորհրդային իշխանությունը, իբր, գնահատելով հայ եկեղեցու ներդրումը և վարքագիծը Երկրորդ աշխարհամարտում, 1945 թ. փոխեց իր վերաբերմունքը և եկեղեցամերժ դիրքորոշումից անցավ եկեղեցահանդուրժ քաղաքականության: Մինչդեռ եկեղեցու հանդեպ վերաբերմունքի մեղմացումը, որ սկսվել էր 1940 թվականին, պայմանավորված էր համաշխարհային պատերազմի բռնկումով: Ի. Ստալինը և իր վարչախումբը ստիպված էին անցկացնելու համընդհանուր ուժերի ու միջոցների մոբիլիզացիա, հետևաբար օգտագործելու նաև հայ եկեղեցու միջոցներն ու հնարավորությունները: Պատերազմական պայմաններում հայ եկեղեցու գոյությունն ապահովագրվեց, որովհետև այն կարևորվեց հակազերմանական ճակատում և պրոսովետական բարոյա-գաղափարական քարոզչության մեջ: Հայ եկեղեցական հաստատությունը պատերազմից շահած դուրս եկավ, քանի որ կարողացավ լիարժեք մասնակցել հակապատերազմական ուժերի «գորահավաքին» և սպասվածից ավելի նպաստ բերել հաղթանակի գործին: Իսկ դրա գինը, հայտնի էլ չէր, գոյություն ունենալու իրավունքն էր, թե պատերազմից հետո այդ էլ կանտեսվեր: Դատելով Ի. Ստալինի վարած հետպատերազմական քաղաքականության մեթոդներից, որոնց մեջ դեռ շարունակում էին առաջնային տեղ գրավել բռնությունն ու պետական ահաբեկչությունը՝ կարելի է ասել, որ պատերազմից հետո եկեղեցին գոյության իսկ հնարավորություն չէր ունենա, եթե այն ինչ-ինչ գործերի համար պետք չգար խորհրդային պետությանը: Բարեբախտաբար, Ի. Ստալինի հաշվարկներում եկեղեցին նույնպես տեղ գտավ: Նա պետք էր գալու, որովհետև հետպատերազմյան պրոսովետական քարոզչության և ժողովրդական դիվանագիտության մեջ, ինչպես նաև սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպման գործում ստանձնելու էր անփոխարինելի դեր: Սա է, որ նախատեսում էր Ի. Ստալինը՝ դեռևս պատերազմը չավարտած, առանց այդ մասին բարձրաձայնելու իր վարչակազմում: Ահա այս տրամաբանությամբ է, որ եկեղեցին սկզբում համեստորեն ներգրավվում է հայրենադարձության նախապատրաստման աշխատանքներում, բայց շուտով պարզվելու էր, որ զանգվածային հայրենադարձությունը, որպես խորհրդային կայսրության պետական ծրագիր, իրագործման փուլում (1946-1948 թթ.) բացառապես կախված է հայ եկեղեցու ակտիվ մասնակցությունից, որովհետև միայն հայ եկեղեցին կարող էր դառնալ հայրենադարձության կազմակերպման գլխավոր լծակ՝ իր նվիրապետական աթոռներով, թեմերով և այլևայլ միջոցներով: Բայց Ի. Ստալինը լավ գիտեր, որ հայոց եկեղեցին և կաթողիկոսը միայն կազմակերպչական լծակներով չէ, որ կարող են նպաստել հայրենադարձության գործին: Կար շատ ավելի կարևոր դեր, որ կարող էր խաղալ միայն եկեղեցին. դա հայրենադարձությանը զանգվածային շարժման բնույթ հաղորդելն էր: Աշխարհասփյուռ հայության շրջաններում կարող էին լուրջ ընդունվել միայն եկեղեցու և կաթողիկոսների հայտարարություններն ու քարոզները նախ՝ հայահավաքի, ապա և հողահավաքի մասին: Կարող էին լուրջ ընդունվել միայն եկեղեցու և նրա պաշտոնյաների հայտարարությունները խորհրդային պետության մեջ հավատացյալների հոգևոր-կրոնական սպասարկման գոյության մասին: Եվ եթե

առաջին հայտարարության մեջ եկեղեցին իր բոլոր սպասավորներով խորապես համոզված էր Թուրքիայի նկատմամբ հողային պահանջներ ներկայացնելու հարցում, պապ երկրորդ հայտարարության մեջ Ամենայն Հայոց կաթողիկոսը, համաձայն Ի. Ստալինի հետ չգրանցված պայմանի, ցավոք, թաքցնում էր իրականությունը: Բացի դրանից՝ նա պարտավոր էր թաքցնել ոչ միայն Ի. Ստալինի ահից, այլև հանուն ազգային բաղձանքների:

Այսպիսով, հայ եկեղեցին պատրաստ էր իր լծակները տրամադրել հայրենադարձության գործին, իսկ Ի. Ստալինը Գևորգ Զ-ի հետ հանդիպման ժամանակ խոստումներ տվեց ապահովելու եկեղեցավարության համար անհրաժեշտ նվազագույն պայմանները և հույս ներշնչեց, որ հայրենադարձության միջոցով կազմակերպվող հայահավաքին հաջորդելու է Թուրքիայի նկատմամբ ներկայացվելիք քաղաքականապես հիմնավոր տարածքային պահանջատիրությունը, այսինքն՝ հողահավաքը:

Իրականում, Երկրորդ համաշխարհային պատերազմը դադարեցրեց խորհրդային իշխանության հակաեկեղեցական «մամլիչի» գործունեությունը, եկեղեցին մասնակցեց հակաֆաշիստական ուժերի զորահավաքին և ակնհայտորեն ապացուցեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն անառարկելի հեղինակություն է սփյուռքահայության շրջանակներում: Խորհրդային ղեկավար Ի. Ստալինը, համոզվելով այդ հարցում, իր քաղաքական ծրագրերում հայ եկեղեցուն վերապահեց ետպատերազմյան մի կարևոր դեր՝ հայրենադարձության շարժումը և կազմակերպումը իրագործելը: Դրա համար էլ 1945 թ. ապրիլին կայացավ Ստալին-Չորեքչյան հանդիպումը, որով և պետություն - եկեղեցի հարաբերությունների կարգավորումը մտավ նոր փուլ՝ թշնամական հակամարտումից դեպի համագործակցում:

Երրորդ գլուխը՝ «**Մեծ հայրենադարձի ծրագիրը, նախապատրաստումը, իրագործումը**», բաժանված է երեք ենթագլխի: Առաջին («**Հայրենադարձությունը խորհրդային ետպատերազմյան քաղաքականության մեջ**») ենթագլխում ներկայացվում է հայրենադարձության կազմակերպման խորհրդային քաղաքականության նպատակը և մերժվում է պատմագիտության մեջ հայտնի այն տեսակետը, թե իբր հայրենադարձության կազմակերպման հիմնական և գլխավոր նպատակը հայկական հողերի վերադարձն էր: Փորձում ենք ցույց տալ, որ հողային պահանջատիրությունն ընդամենը Ի. Ստալինի քաղաքական հնարքն էր՝ սփյուռքահայերի հայրենադարձությանը զանգվածային բնույթ հաղորդելու համար, և որ իրականում Մեծ հայրենադարձությունը խորհրդային կայսրության և Ի. Ստալինի ետպատերազմյան քաղաքականության մի փոքր մասն էր միայն: Հայրենադարձության կազմակերպմամբ խորհրդային իշխանությունները հետապնդում էին երկու հիմնական նպատակ: Առաջինը՝ քաղաքական. պետք էր կանխել արտասահմանում մնացած խորհրդային քաղաքացիների, գերիների կողմից ԽՍՀՄ-ի նկատմամբ քաղաքական ընդդիմության ձևավորումը, երկրորդը՝ տնտեսական. անհրաժեշտ էր խորհրդային Միություն վերադարձնել աշխատունակ մարդկանց, հատկապես հետպատերազմյան տնտեսական քառսի պայմաններում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին խորհրդային իշխանություններին արդեն մտահոգում էր այն հանգամանքը, որ հիտլերյան Գերմանիայի պարտությունից հետո դաշնակից տերությունները, տարվելով ետպատերազմյան մրցավազքով, ֆինանսական և այլ կարգի օգնությամբ, այլևս չեն

նպաստի խորհրդային երկրին՝ բուժելու պատերազմի վերքերը և վերականգնելու ավերված տնտեսությունը: Ուստի պատերազմում մեծ կորուստների գնով հաղթելուց հետո տնտեսական ու սոցիալական ճակատում չպարտվելու և ամեն ինչը տանուլ չտալու համար հարկավոր էր մոբիլիզացնել բոլոր հնարավոր ու նույնիսկ անհնար միջոցները՝ երկրի վերականգնման գործում նորանոր ռեսուրսներ ներգրավելու համար: Գաղտնիք չէր, որ երկիրը զրկվել էր առողջ ու աշխատունակ մարդկային ռեսուրսներից: Պատերազմից վերադարձածների մեծ մասը վիրավոր ու հաշմանդամ էր, աշխատուժը հիմնականում իզական էր, մասնագիտական ներուժը՝ չնչին, երկիրը՝ քաղցած ու մերկ: Իսկ պիտանի աշխատուժի զգալի մասը պատերազմի պատճառով հայտնվել էր դրսում, Խորհրդային Միության մեծ թվով քաղաքացիներ, նաև ռազմագերիներ գտնվում էին օտար երկրներում: Սակայն ռազմագերիներից շատերը, իմանալով, որ խորհրդային իշխանությունն իրենց համարում է «ազգի դավաճան», նախընտրում էին մնալ արևմուտքում<sup>1</sup>:

1945 թ. փետրվարի 4-ից 11-ը Ղրիմում կայացած խորհրդաժողովի ժամանակ, ի շարս այլ հարցերի, Ի. Ստալինը, Ֆ. Ռուզվելտը և Ու. Չերչիլը գաղտնի համաձայնության են գալիս, որ Խորհրդային Միության բոլոր այն քաղաքացիները, ովքեր մնացել են արտասահմանում, այդ թվում նաև միլիոնավոր ռազմագերիներ, անկախ իրենց կամքից, պետք է վերադառնան Խորհրդային Միություն<sup>2</sup>: Այդպիսով, սկսվում է մի գործընթաց, որը հայտնի է որպես հայրենադարձություն (ռեպատրիացիա), թեև շատ դեպքերում կարելի է անվանել հարկադիր կամ բռնի տեղահանություն<sup>3</sup>:

Ստալինյան հայրենադարձության քաղաքականության այս ողջ համատեքստում էլ տեղի էր ունենում նաև 1946-1948 թթ. հայոց հայրենադարձությունը, որը, իհարկե, բխում էր Ի. Ստալինի ամբողջատիրական ծրագրերից:

Եթե Խորհրդային Միության ռազմագերիների և արտերկրում ապաստանած խորհրդային քաղաքացիների պարագայում հնարավոր էր իրականացնել բռնի ներգաղթ, ապա հայության պարագայում անհնար էր, ուստի այս դեպքում էլ Ի. Ստալինն առաջ է քաշում Թուրքիայից հայկական հողերը վերադարձնելու խնդիրը՝ քաջ գիտակցելով, որ հայությանը ոգևորելու և դեպի Խորհրդային Հայաստան խանդավառությամբ տոգորելու համար անհրաժեշտ է ազգային հզոր գործոն, այն է՝ հայոց պահանջատիրությունը:

Այնուհետև անդրադարձ է արվում միջազգային տարբեր հարթակներում Հայկական հարցի արծարծումներին: Խորհրդային քաղաքական օրակարգ է

<sup>1</sup> Տե՛ս Գ. Կոկեբաևա, Репатриация советских военнопленных, служивших в восточных регионах, [http://www.rusnauka.com/5\\_SWMN\\_2011/Istoria/2\\_79640.doc.htm](http://www.rusnauka.com/5_SWMN_2011/Istoria/2_79640.doc.htm)

<sup>2</sup> Ըստ Ի. Ստալինի, Խորհրդային Միության բոլոր զինվորները, ովքեր կամավոր կամ բռնի գերի են ընկել գերմանացիներին, ինչպես նաև այն քաղաքացիները, ովքեր անգամ կարճ ժամանակով գտնվել են արտերկրում և տեսել են այլ կյանք, համարվում էին դավաճաններ ու պետական հանցագործներ, ուստի պետք է վերադառնան իրենց երկիր, ուզում են դա նրանք, թե ոչ: Ի. Յակ, Репатриация советских граждан: как это было, [http://ricolor.org/history/rsv/aft/29\\_04\\_2011/](http://ricolor.org/history/rsv/aft/29_04_2011/)

<sup>3</sup> Տե՛ս Մ. Շմիգել, Советская акция по репатриации на территории Словакии (1945-1948) (по материалам словацких архивов), Крыніцазнаўства і спецыяльныя гістарычныя дысцыпліны. Вып. 7, Мінск 2012, с. 100.



մտնում Թուրքիայից հայկական հողերի պահանջի հարցը, որը, ինչ խոսք, սփյուռքահայերի նվիրական երազանքն էր, և որի համար էլ նրանք պատրաստ էին ներգաղթել հայրենիք: Սակայն, Ի. Ստալինը Հայկական հարցի իրագործման համար չունենալով իրական ռազմա-քաղաքական նպատակադրում՝ այնուամենայնիվ, առաջ է քաշում հարցը՝ այեկոծելով ողջ սփյուռքը: Նա այս պահանջն օգտագործում էր ընդամենը հայրենադարձություն կազմակերպելու համար: Իսկ եթե հանկարծ Թուրքիան և նրան սատարող միջազգային ուժերը թույլ գտնվեին և զիջեին հողերը, ավելի լավ: Դրա համար էլ Ի. Ստալինը տարբեր միջազգային ատյաններում հնչեցնում էր այդ պահանջը՝ իբրև հունանիստական խնդիր՝ համապատասխան զուգահեռ պետական միջոցառումներով հանդերձ (բանակի կենտրոնացում սահմանին, ապագա մարզերի կառավարիչների նշանակում և այլն: Օրինակ, իր բանավոր հաղորդման համաձայն՝ Անտոն Երվանդի Քոչինյանը հեռակա նշանակվել էր Կարսի նահանգապետ), առանց բացահայտելու քաղաքական «խաղի» իմաստը: Այդ դիվանագիտական հնարքը հավանաբար առաջին անգամ կիրառվեց Գևորգ Չորեքյանի հետ հանդիպման ժամանակ, երբ նրան հնարավորություն տվին Ի. Ստալինի առաջ հարուցելու հայոց հողերի հարցը և:

Երկրորդ («Հայրենադարձության սփյուռքյան պատկերը») ենթաբաժնում ներկայացվում են սփյուռքյան կառույցների, հատկապես ավանդական կուսակցությունների (ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ) իրարամերժ վերաբերմունքն ու դիրքորոշումը ներգաղթի վերաբերյալ, մատնանշվում են նաև տեղական կոմիտեների գործունեության, հայրենադարձների ցուցակագրման և այլնայլ աշխատանքներում եղած թերությունները:

Դաշնակցականները բացահայտ սկսում են ընդդիմանալ հայրենադարձությանը, մամուլի ու տարբեր միջոցներով քննադատության ենթարկում ինչպես ներգաղթը, այնպես էլ դրա կազմակերպիչներին: Դաշնակցական մամուլը հեղեղվում է քննադատական հոդվածներով: Նշվում է, որ Հայաստանի կառավարության անբարեխիղճ ու անհիմն կարգադրությունների ու որոշումների պատճառով հայկական հոծ զանգվածներն ուղղակի աղետի են մատնվում համարյա բոլոր հայաշատ երկրներում<sup>4</sup>: Ի տարբերություն Դաշնակցության՝ Ռամկավար ազատական և Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունները մինչև վերջ կողմ էին հայրենադարձությանը և սատարում էին նրա իրագործմանը: Ներգաղթի խնդիրն իր վրա է բևեռում ողջ սփյուռքահայության ուշադրությունը: Անկախ ներգաղթի նկատմամբ ունեցած դիրքորոշումից և վերաբերմունքից՝ ցանկացած ելույթ կամ հոդված շատ բուռն ու հուզմունալից է լինում: Եվ կարևոր չէ, թե դրանց հեղինակները հայրենադարձությունը ընդունում էին, թե ոչ, միևնույն է, յուրքանչյուրի դեպքում էլ արծազանքները հաճախ չափազանցված ու զգայական էին լինում:

Հայրենադարձության հարցում սփյուռքահայությունը բաժանվել էր երկու հակադիր բևեռի. մի կողմից հայ եկեղեցին՝ առաքելական և կաթոլիկ հակադրությամբ, մյուս կողմից՝ քաղաքական կուսակցությունները՝ դաշնակցականների և խորհրդամետ այլ ուժերի հակամարտությամբ:

<sup>4</sup>Տես «Յառաջ» 3 փետրվարի, 1946 թ., N 255:

Անկախ հայրենադարձության նկատմամբ տիրող հակասական կարծիքներից, խորհրդային իշխանությունների ենթատեքստային, քողարկված քաղաքականությունից և այլ հանգամանքներից՝ այնուամենայնիվ, սկսվում է զանգվածային հայրենադարձությունը: Դատելով ընթացքից և արդյունքից՝ պետք է ասել, որ հայրենադարձության քարոզիչները սփյուռքում հաղթեցին հակաքարոզիչներին, որովհետև այդ պայքարը զխավորում էր Հայ առաքելական եկեղեցին՝ իր երկու աթոռներով: Եթե եկեղեցին չմասնակցեր քարոզչությանը և սփյուռքում ծագած խնդիրների լուծմանը, ընդդիմադիրները կհաղթեին:

Երրորդ ենթագլխում (**«Հայրենադարձության խորհրդային պատկերը»**) առանձնակի ուշադրություն է դարձվում Մեծ հայրենադարձության նախապատրաստական ու կազմակերպչական աշխատանքներին, իրականացման ճանապարհին թույլ տված սխալներին ու բացթողումներին, հայրենադարձվածներից շատերի հուսալքումներին ու տառապանքներին, ինչպես նաև ներգաղթին առնչվող այլ հարցերի:

Հայրենադարձության կազմակերպման գործում խորհրդային իշխանությունների չհամակարգված ու բարձիթողի աշխատանքի պատճառով եղան բազմաթիվ թերություններ ու սխալներ. հայրենադարձների տեղաբաշխմանը, նրանց բնակարանով ու աշխատանքով ապահովելուն ուղղված ջանքերը խիստ անարդյունավետ էին: Խորհրդային երկրի իրական հնարավորությունները բավարար չէին նման ծավալի հայրենադարձության համար, ինչի հետևանքով հազարավոր հայրենադարձներ հայտնվեցին սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ: Եվ եթե այս ամենին էլ զումարենք այն խոր հիասթափություններն ու հալածանքները, հոգեկան գրկանքներն ու տառապանքները, որ ապրեցին մեր ներգաղթած հայրենակիցները, ապա կարելի է միայն պատկերացնել, թե ինչ իրավիճակում էին նրանք, իսկ հոգևոր կյանքի տեսակետից՝ ուղակի աննկարագրելի: Սփյուռքահայերի համար բավականին խորթ էին հայրենիքի հակազգային ու հակակրոնական իրողությունները:

Հայրենադարձության խորհրդային և սփյուռքյան պատկերների համեմատումից ակնհայտ է դառնում, որ Հայ առաքելական եկեղեցու երկու աթոռների միասնական ջանքերի շնորհիվ սփյուռքում գործն ավելի լավ էր կազմակերպվում, քան ընդունող խորհրդային երկրում, որտեղ եկեղեցին արդեն նշույլաչափ մասնակցություն չուներ: Ներգաղթող քարավանների հետևից փակվում էր երկաթե վարագույրը, և սկսվում էր տառապելով ու տոկալով ապրելու փորձությունը:

Հայրենադարձները խորհրդային կյանքի մաքառման տարիներին մի տեսակ ինքնամփոփվեցին ու պատենավորվեցին լռությամբ ու զգուշությամբ՝ չվստահելով նաև իրենց նման անօգնական ու աղքատ տեղացիներին: Դրության լրջությունը թեթևացնելու և հաղթահարելու միակ միջոցը բանախուսական հումորն էր՝ «ախպարական անեկդոտների» շարքով, որ բավականին նպաստեց տեղի հասարակության հետ հոգեբանորեն մերձենալուն և միավորվելուն: Արդեն դառը ժպիտ էին շարժում հայոց հողերի, խորհրդային դրախտի մասին նախկին խաբկանքները: Ինքնարդարացման համար գոնե Երևանի նորեկները հայրենասիրական նոր պատճառաբանում գտան. եթե հայրենադարձները հայկական հարցի լուծմանը չնպաստեցին, ապա գոնե օգնեցին խորհրդային Հայաստանին՝ պահպանելու հանրապետության կարգավիճակը, քանի որ, իբր թե,

Հայաստանը միլիոնից պակաս բնակիչ կունենար և կդառնար ինքնավար մարզ կամ հանրապետություն: Պարզ է, հայ հասարակությանը, Խորհրդային Հայաստանին օգտակար լինելու քաղաքական բաղձանքից է ծնվել հերթական «բանահյուսական» մեկնաբանությունը հայրենադարձների շրջանակներում և տարածվել ավելի լայն ոլորտներում՝ դարձյալ նպաստելով հայրենադարձի և տեղացու «ինտեգրման» նուրբ ընթացքին:

Այսպիսով, Մեծ հայրենադարձության գործընթացը թե՛ ընդգրկման ծավալով, թե՛ թվաքանակով և թե՛ քաղաքական տարբեր դրոշմատվածառններից ելնելով, աննախադեպ երևույթ էր, որը դրական ու բացասական կողմերով, խորքային նպատակներով ու «ենթատեքստով», տասնյակ հազարավորների նվիրական երազներով ու ակնկալիքներով, հուսալքումներով ու տառապանքներով հանդերձ, այնուամենայնիվ, դրականորեն ազդեց խորհրդային երկրի տնտեսության, մշակույթի, գիտության, կրթության, առողջապահության և մի շարք այլ բնագավառների վրա:

Երկրորդ աշխարհամարտի հետևանքով ազգային գենոֆոնդի կրած կորուստը երկրում առաջացրել էր աշխատուժի խոր ձգնաժամ, և, ահա, հայրենադարձության շնորհիվ ոչ միայն փոխվում է երկրի ժողովրդագրական պատկերը, այլև մասնագիտական աշխատուժի շնորհիվ վերականգնվում է ձգնաժամի եզրին գտնվող երկիրը: Ի դեմս հայրենադարձների՝ Խորհրդային Հայաստանը ունեցավ անվանի մասնագետներ՝ որակյալ ինժեներներ, մանկավարժներ, բժիշկներ, գիտության ու մշակույթի խոշոր գործիչներ:

Չորրորդ գլուխը՝ «Հայ եկեղեցին և Մեծ հայրենադարձը», բաղկացած է երկու ենթաբաժնից: Առաջին («Հայրենադարձությունը և Հայ առաքելական եկեղեցին») ենթաբաժնում ներկայացվում է հայրենադարձության կազմակերպման ու իրականացման գործում Հայ առաքելական եկեղեցու դերակատարությունը: Եկեղեցական վավերագրերի և արխիվային նյութերի հիման վրա կարևորվում է այն հանգամանքը, որ առանց Հայ առաքելական եկեղեցու օժանդակության հնարավոր չէր լինի սփյուռքահայերին զանգվածորեն ուղղորդել դեպի հայրենիք:

Իսկ ինչու՞ էր անհնար հայրենադարձությունն առանց Հայ առաքելական եկեղեցու:

Նախ՝ սփյուռքահայության ճնշող մասերը կազմում էին այդ եկեղեցու երկու թևերին՝ Էջմիածնին և Անթիլիասին պատկանող թեմերը, իսկ այդ ժամանակ երկու կաթողիկոսարաններն իրենց եկեղեցապետերով շատ համերաշխ, համախոհ ու համաշահ էին: Ուստի եկեղեցու երկու թևերն էլ միաբանորեն պետք է վկայեն մամուլում և զանգվածային այլ միջոցներով, որ խորհրդային երկրում կա եկեղեցական կյանք, կա քաղաքացիների հոգևոր պահանջների ծխական սպասարկում, որպեսզի հավատացյալ հայրենակիցների մեծագույն մասին համոզեն ներգաղթել հայրենիք: Բացի դրանից՝ հարկավոր էր եկեղեցուն և բոլոր մյուս քարոզիչներին տալ պատճառաբանության հնարավորություն՝ հայրենադարձել հանուն տարածքային պահանջների: Նախ՝ ազգահավաք, ապա՝ հողահավաք: Արդեն նշվեց, որ Ի. Ստալինի հետ հանդիպմանը նախապատրաստվելու ժամանակ ազգընտիր տեղապահ Գևորգ Չորեքյանը հավանաբար ուղղորդվել էր Լ. Բերիայի ծառայությունների կողմից, որպեսզի նա գրույցի մեջ շոշափի թրքահայ հողերի վերադարձման հարցը: Ի. Ստալինի իրական արծագանքը, բնականաբար, թույլ է

տվել, որ այդ հարցը հրապարակվի հայության բուռն ու զանգվածային ոգևորությունը հարուցելու միտումով:

Հայրենադարձություն կազմակերպելու մասին ԽՍՀՄ ժողկոմխորհի որոշումից հետո (1945 թ. նոյեմբերի 21) Գևորգ Զ կաթողիկոսը հանդես է գալիս ռադիոտելույթով՝ հայտարարելով, որ վերջապես իրականանում է սփյուռքի ցիրուցան հայության նվիրական իղծը, նրա վեհ տենչը՝ հավաքվել իր ազատագրված և պաշտելի պապական օջախի շուրջը ու իր հարազատ եղբայրների հետ, ձեռք ձեռքի տված, լծվել նրա վերելքին, ապրել նրա բարիքներով, սնվել ու զարգանալ նրա բարձր ազգային մշակույթով<sup>5</sup>: Այս ելույթում կաթողիկոսը բարձրացնում է նաև հայերի հողային պահանջատիրության հարցը և հույս հայտնում, որ գերտերությունները ելք կգտնեն հայ ժողովրդի արդար պահանջը դրականապես լուծելու և նրան վերադարձնելու Տաճկաստանի կողմից բռնությամբ գրավված իր պապենական հողերը<sup>6</sup>:

Ամենայն Հայոց կաթողիկոսի ելույթներն ու ներգաղթի կոչերը մեծ խանդավառություն էին առաջացնում սփյուռքում: Սփյուռքահայ մամուլը հեղեղված էր ներգաղթի ոգևորությամբ: Գրեթե բոլոր տեղերում հայերին ոգևորելու ու առաջնորդելու գործը ստանձնել էին հայ եկեղեցու առաջնորդները: Նրանք ամենուր հայտարարում էին մայր հայրենիքի հզորացման ու վերագարթոնքի, ինչպես նաև հայության պապենական հողերի ետ վերադարձման մասին: Այդ ամենով հանդերձ չպետք է մոռանալ, որ 1945 թ. ապրիլից մինչև 1947 թ. իր ելույթները՝ հայահավաքի ու հողահավաքի թեմայով, սկզբում տեղապահ, ապա կաթողիկոս Չորեքյանը համաձայնեցրել էր իշխանությունների հետ:

Ներգաղթի հարցը լուծելու, այդ նպատակով դրամական միջոցների հայթայթման, սփյուռքահայերին խորհրդային երկիրը վառ գույներով ներկայացնելու գործում Հայ առաքելական եկեղեցին՝ կաթողիկոս Չորեքյանի գլխավորությամբ, որևէ ջանք չէր խնայում, որովհետև հատկապես եկեղեցուն պիտի հավատար ու վստահեր հասարակ սփյուռքահայը: Դրա համար է, որ պատեհ բոլոր առիթներով Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ ի շահ ազգահավաքի, չի հոգնում հայրենասիրության ու ազգասիրության ոգևորիչ կոչեր անելուց: Իր հարցազրույցներից մեկում անդրադառնալով ներգաղթի թեմային՝ կաթողիկոսը նշում է, որ հայ ժողովրդի պարտականությունն է ամեն ինչ ստորադասել հանուն ազգահավաքման, հայրենադարձի նվիրական գաղափարի կենսագործման<sup>7</sup>: Որովհետև կաթողիկոսի կարծիքով այդ ազգահավաքին հաջորդելու է հողահավաքը: Ահա թե ինչու է վեհափառն ամեն ինչ ստորադասում հայրենադարձին, ահա թե ինչու է նա բացահայտ խեղափոխում ու զունագարդում խորհրդային իրականությունը: Գուցե և խղճի խորին տանջանքով, հանուն հայրենիքի ապագայի ճշմարտությունը «արդարացի և իրավացի թաքցնելու զգացումով» կեղծ վկայությունների դիմելով՝ մեծ հայրենասերը փորձում է կառչել քաղաքական բարենպաստ պահից և օգուտ քաղել «քմահաճ» պատմության ընձեռած առիթից:

<sup>5</sup>Տես «Էջմիածին», 1946 թ., հունվար, էջ 9:

<sup>6</sup>Տես նույն տեղում:

<sup>7</sup>Տես Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938-1955 թթ.), գիրք Զ, կազմող՝ Ս. Բեհբուդյան, Երևան, 1999, էջ 354:

1945 թ. դեկտեմբերի 20-ի՝ թեմերին ուղղված շրջաբերական կոնդակով իր վերաբերմունքն է արտահայտում նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանը:

Կիլիկիո կաթողիկոսը հորդորում է սփյուռքահայերին, որպեսզի ակտիվորեն մասնակցեն ներգաղթի համար կազմակերպվող հանգանակություններին՝ նշելով, որ ինչպես «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հանգանակության ժամանակ, այնպես էլ հիմա, սփյուռքն իր ներդրումը պիտի ունենա հայրենիքի մտավոր ու նյութական վերակառուցման գործում:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը, թեև ամեն կերպ աջակցում և օժանդակում էր ներգաղթի իրականացմանը, այնուամենայնիվ կային որոշ խնդիրներ, որոնց վերաբերյալ Վեհափառը բարձրաձայնում էր.

«... Հայաստանը պէտք ունի պատերազմի հետևանքով իր կրած կորուստների տեղը լցնելու նոր բնակիչներով ... Բայց իր ներկա կացութեան մէջ՝ Հայաստան չի կարող 70.000 – 100.000 ներգաղթողներից աւելիին տեղ գտնել ... մինչ այս երկրներում մենք ունենք դրա եռապատիկն ու քառապատիկը ... Համբերող եղէք, մի՛ խուժեք կարաւանների մաս կազմելու, մի՛ քայքայէք ձեր բարեկեցիկ թաղերն ու գործերը ...»<sup>8</sup>:

Ներհուն գիտնականն ու կաթողիկոսը կռահել էր ստալինյան դիվանագիտական «խաղի» իմաստը: Ահա այս էր պատճառը, որ Գարեգին Ա-ն ավելի մեծ ջանքեր է գործադրում «Անթիլիասը զօրաւոր կեդրոն» դարձնելու ուղղությամբ: Հենց ներգաղթի տարիներին է, որ կաթողիկոսը նոր ձեռնադրումներով ավելացնում է Անթիլիասի միաբանությունը, ավելացնում է Դպրեվանքի աշակերտների թիվը, կատարում է մյուռնօրհներ, կազմակերպում տարբեր հորեյանական հանդիսություններ և զանազան այլ ձեռնարկներ: Զգացվում է, որ իմաստուն և զգուշավոր կաթողիկոսը ոչ միայն լավ գիտեր խորհրդային իրականությունը, ոչ միայն կռահում էր հայրենադարձների գալիքը, այլև, ամրացնելով Անթիլիասի աթոռը, ի մտի ուներ ոչ միայն քարոզվող պայծառ սպագան, այլև ստալինյան բռնապետությունից միանգամայն սպասելի վատթարագույն օրը, երբ Կիլիկիո աթոռը ստիպված կլիներ փոխարինել նաև աթեիստական ռեժիմի զոհ դարձած Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Սփյուռքում գործող Հայ առաքելական եկեղեցու կառույցներն ու թեմերը ջանք ու եռանդ չէին խնայում հայրենադարձության կազմակերպման ուղղությամբ՝ տեղում աջակցելով ներգաղթի կոմիտեներին, կազմակերպելով հանգանակություններ, ինչպես նաև Գևորգ Զ կաթողիկոսի առաջարկով պետք է ներգաղթող հայերի գույքն ի պահ վերցնեին՝ հետագայում վաճառվող կալվածքների հաշվին զանձելու և վերադարձնելու պայմանով:

Երկրորդ ենթաբաժնում (**«Հայրենադարձությունը և Հայ կաթողիկե ու ավետարանական եկեղեցիները»**) խոսվում է ներգաղթի վերաբերյալ Հայ կաթողիկե եկեղեցու դիրքորոշման և խորհրդային Հաստատանի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին: Ներկայացվում է պատրիարք Աղաջանյանի՝ հայ կաթողիկ համայնքին ուղղված «Թուղթ Հովուական» շրջաբերականը, որով պատրիարքը կոչ է անում իր հոտին չներգաղթել խորհրդային Հայաստան, քանի որ այնտեղ չկա

<sup>8</sup>Բ. Եղիայեան, Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս-Լիբանան, 1975, էջ 609:

կրոնական ազատություն, ինչպես նաև մատնանշվում են այս առթիվ լույս տեսած խորհրդամետ ուժերի հակաաղաքանյանական մեղադրանքներն ու զրպարտանքները:

Շրջաբերականում կարդինալը հանգամանորեն ներկայացնում է, որ Հայ կաթողիկե եկեղեցին երբեք չի ժխտել ազգային գոյության իրավունքը, նրա յուրահատուկ մշակույթը, հայրենասիրությունը, ծեսերն ու ավանդությունները և որ, լինելով Հայ կաթողիկե եկեղեցու անդամ, պետք է լինել ազգասեր և հայրենասեր հայ:

Կաթոլիկահայության առաջնորդը նշում է, որ Հայ կաթողիկե պատրիարքարանը մշտապես իր աջակցությունն է ցուցաբերել հայ ազգին, թեև դա երբեմն եղել է քողարկված: Ինչպես ամբողջ ազգը, Հայ կաթողիկե համայնքը ևս, բաժան-բաժան լինելով, ցիրուցան եղավ աշխարհով մեկ և հայրենիքի համազգային հանգանակություններին էլ պատասխանեց իր սիրահոժար մասնակցությամբ:

Ո՞րն էր պատճառը, որ կարդինալ Աղաջանյանը դեմ էր ներգաղթին: Մի՞թե խորհրդային Հայաստանում տիրող կրոնական անազատ մթնոլորտն էր միայն, որ կաթոլիկ առաջնորդը նման դիրքորոշում ուներ, թե՞ կար ավելի խորքային պատճառ:

Կարելի է կարծել, որ կարդինալ Աղաջանյանի համար հիմնական ու առանցքային պատճառը Հայ կաթողիկե եկեղեցու շահն էր, որին ներգաղթը ընդհանրապես հակացուցված էր: Հասկանալի է, որ կաթոլիկահայության զանգվածային ներգաղթի պարագայում կթուլանային Հայ կաթողիկե եկեղեցու դիրքերը, մանավանդ որ խորհրդային Հայաստանում կաթոլիկ համայնքի հետագա գոյությունն անհնար էր պատկերացնել խորհրդային հակակրոնական ու հակապապական թշնամանքի պայմաններում: Ուստի, որպեսզի Հայ կաթողիկե համայնքը չթուլանար և չկորցներ իր հոգևոր կրոնական ողջ կառուցվածքը, հայր Աղաջանյանը ծավալում է հականերգաղթյան այսպիսի գործունեություն:

Կարդինալ Աղաջանյանի այս դիրքորոշումը պիտի հարուցեր ներգաղթի կողմնակիցների ու աջակիցների խոր վրդովմունքը: Հրապարակվում են քննադատական տարբեր ելույթներ, լույս են տեսնում բազմաթիվ հոդվածներ ու վերլուծություններ, որոնք զերծ չէին զրպարտանքներից:

Սույն ենթաբաժնում անդրադարձ կա նաև Հայ ավետարանական համայնքին, որի անդամները ևս ներգաղթել են խորհրդային Հայաստան, որտեղ մասնակիորեն գտել են հայ ավետարանականների հոգևոր պահանջմունքների բավարարման փոքրիկ հնարավորություն: Ներգաղթի հարցում հայ ավետարանականները հիմնականում հետևում են Հայ առաքելական եկեղեցուն: Եվ քանի որ Հայ առաքելական եկեղեցին էլ դարձել էր հայրենադարձության գործի քարոզիչ ու ուղղորդողը, իսկ այս հարցում ավետարանականները նրանց հետ լուրջ տարածայնություններ չունեին, հայ բողոքական համայնքների համար ևս ներգաղթը դառնում է առաջնային և ընդունելի:

Ամփոփելով հայ եկեղեցու ներդրումը Մեծ հայրենադարձության գործում՝ պետք է ասել, որ հայրենադարձությունը նման ծավալով ու ընդգրկումով չէր իրականանա, եթե Հայ առաքելական եկեղեցին իր ծանրակշիռ մասնակցությունը չունենար: Սփյուռքի ամենահեղինակավոր կառույցի՝ Հայ առաքելական եկեղեցու ուղերձներն ու խորհուրդներն ընդունելի էին սփյուռքի բոլոր հատվածների համար, ուստի հայոց հողերի վերադարձի և հայրենադարձության կոչերը ևս պիտի բուռն

ընդունելության արժանանային: Սփյուռքահայերը հավատում էին հայկական հողերի վերադարձին, Խորհրդային Հայաստանի՝ դրախտի մասին եկեղեցու չափազանցված և հորինված պատմություններին, հավատում էին, որ այնտեղ կա եղեղեցական ազատ կյանք, որ իրենց հոգևոր պահանջների բավարարման համար կան բոլոր պայմանները, որ իրենց ի պահ տված ունեցվածքը կվաճառվեր և դրանը կվերադարձվեր, որ աշխատանքով ապահովված կլինեին, կունենային բնակարաններ, վարկեր կստանային պետությունից և այլն և այլն: Ահա եկեղեցու տված այս բոլոր խոստումներն էին, որ սփյուռքահային ոգևորեցին և ուղղորդեցին դեպի Խորհրդային Հայաստան:

Ներգաղթի և եկեղեցու համադրումը հյուսվել է բռնապետ Ի. Ստալինի ուղեղում: Մեր եկեղեցու մտքով չէր անցնի, որ ինքը կարող է նման համաժողովրդական ու համապետական շարժում կազմակերպել: Բայց Ի. Ստալինը նկատել էր այդ հզոր «լծակը» դեռ «Սասունցի Դավթի» հանգանակման ժամանակ, և եթե Խորհրդային այլ հանրապետությունների կորցրած աշխատուժը հնարավոր էր վերականգնել բռնի միջոցներով ու պետական պարտադրանքով, ապա Հայաստանում այն հնարավոր էր վերականգնել միայն կամավոր հիմունքներով: Կյանքը ցույց տվեց, որ կամավոր շարժման մեծագույն հարուցիչը կարող էր լինել միայն եկեղեցին: Իսկ պետական պարտադրանք ու բռնի միջոցներ կիրառվեցին այն ժամանակ, երբ հարկ եղավ դադարեցնելու հայոց Մեծ հայրենադարձության ահազանցող ալիքը:

**Եզրակացություններ:** Հավաքելով «Մեծ հայրենադարձությունը և Հայ եկեղեցին» թեմային առնչվող պատմական տվյալները, արխիվային նյութերը, մամուլի հոդվածները, բանասացներից ստացված տեղեկությունները, ինչպես նաև հայ եկեղեցու պատմության բազմազան վավերագրերն ու մի շարք անուղղակիորեն առնչվող այլ աշխատանքներ և ենթարկելով պատմաեկեղեցաբանական վերլուծության՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. 1921-1936 թթ. ներգաղթի ժամանակ, ի տարբերություն գալիք 1946-1948 թթ. Մեծ հայրենադարձության, հայ եկեղեցին Խորհրդային իշխանությունների կողմից ոչ միայն վտարված էր բոլոր գործընթացներից, այլև դատապարտված էր ոչնչացման:
2. Եկեղեցու հանդեպ ունեցած վերաբերմունքի մեղմացումը կապված էր Երկրորդ համաշխարհային պատերազմի հետ, երբ Ի. Ստալինը ստիպված էր օգտագործել նաև հայ եկեղեցու միջոցներն ու հնարավորությունները: Պատերազմի պայմաններում եկեղեցին ստացավ գոյատևման հնարավորություն, որովհետև կարևորվեց եկեղեցու դերը հակազերմանական ճակատում, ինչպես նաև Մեծ հայրենադարձի կազմակերպման ու Ետպատերազմյան արտաքին հարաբերություններում հասարակական կարծիքի ձևավորման գործում:
3. Եթե 1946-1948 թթ. Մեծ հայրենադարձության պատմության թեման առկա է մեծաթիվ պատմագիտական աշխատանքներում, ապա այն գրեթե անտեսված է եկեղեցաբանական հետազոտություններում, մինչդեռ զանգվածային հայրենադարձությունը չէր կայանա առանց հայ եկեղեցու ցանկության և օժանդակության:
4. Հայրենադարձության կազմակերպման քաղաքական նպատակը պատմագիտության մեջ հիմնականում կապում են հայկական հողերի

- վերադարձի հետ: Մեծ հայրենադարձի եկեղեցաբանական քննության արդյունքում բացահայտվեց Ի. Ստալինի քաղաքական «խաղը», այն է՝ հայրենադարձության կազմակերպման խորհրդային պետության նպատակը ոչ թե հայրենադարձության օգտագործմամբ Թուրքիային հողային պահանջ ներկայացնելն էր, այլ ճիշտ հակառակը՝ հողային պահանջն օգտագործել հայրենադարձություն կազմակերպելու համար:
5. 1946-1948 թթ. Մեծ հայրենադարձությունն Ի. Ստալինի ետպատերազմյան քաղաքականության ծրագրերից է և ամբողջովին բխում էր այն իրողությունից, որ պատերազմից հետո խորհրդային երկիրը հայտնվել էր տնտեսական քաոսի մեջ և օդ ու ջրի նման հարկավոր էր խորհրդային Միություն վերադարձնել աշխատունակ մարդկանց: Եվ եթե խորհրդային Միության ռազմագերիների և արտերկրում ապաստանած խորհրդային քաղաքացիների դեպքում հնարավոր էր կազմակերպել բռնի ներգաղթ, ապա հայերի պարագայում անհնար էր, և Ի. Ստալինը բարձրացնում է Թուրքիայից հայկական հողերը վերադարձնելու խնդիրը՝ լավ հասկանալով, որ հայությանը ոգևորելու և դեպի խորհրդային Հայաստան ուղղորդելու համար անհրաժեշտ էր ազգային գործոն՝ հայոց հողային պահանջատիրությունը:
  6. Հայրենադարձության հարցում սփյուռքահայությունը բաժանվել էր երկու հակադիր բևեռների. մի կողմից՝ հայ եկեղեցին՝ առաքելական և կաթոլիկ հակադրությամբ, մյուս կողմից՝ քաղաքական կուսակցությունները՝ դաշնակցականների և այլ խորհրդամետ ուժերի հակամարտությամբ:
  7. Հայ առաքելական եկեղեցու երկու աթոռների միասնական ջանքերի շնորհիվ սփյուռքում գործն ավելի լավ էր կազմակերպվում, քան ընդունող խորհրդային երկրում, որտեղ արդեն եկեղեցին նշույլաչափ մասնակցություն չուներ:
  8. Մեծ հայրենադարձի հանկարծակի դադարեցումը ցույց է տալիս, որ, նախ՝ խորհրդային իշխանությունները հասել էին իրենց բուն նպատակին՝ անհրաժեշտ քանակի աշխատուժի ներմուծմամբ, ապա, որ արևմուտքի հետ «սառը» պատերազմի սկսումով ստալինյան քաղաքական, դիվանագիտական «բլեֆը» իմաստագրկվել էր:
  9. Հայրենադարձության հանկարծակի դադարեցումն անսպասելի էր նաև հայ եկեղեցու համար, որը, փաստորեն, հայտնվել էր մի կողմից իշխանությունից «խաբվածի», իսկ մյուս կողմից՝ սփյուռքահայերին ականա «մոլորեցնողի» դերում:
  10. Երկրորդ աշխարհամարտի հետևանքով ազգային գենոֆոնդի կրած կրուստը երկրում առաջացրել էր աշխատուժի խոր ձգնաժամ, և հայրենադարձության շնորհիվ ոչ միայն փոխվում է երկրի ժողովրդագրական պատկերը, այլև մասնագիտական աշխատուժի շնորհիվ վերականգնվում էր ձգնաժամի եզրին գտնվող երկիրը: Ի դեմս հայրենադարձների՝ խորհրդային Հայաստանն ունեցավ անվանի մասնագետներ՝ որակյալ ինժեներներ, մանկավարժներ, բժիշկներ, գիտության ու մշակույթի խոշոր գործիչներ:
  11. Մեծ հայրենադարձությունը, որպես խորհրդային կայսրության պետական ծրագիր, զանգվածորեն չէր իրագործվի, եթե չլիներ հայ եկեղեցու



մասնակցության բարձր աստիճանը, քանի որ միայն հայ եկեղեցին էր ի զորու դառնալու հայրենադարձության կազմակերպման գլխավոր լծակ՝ իր նվիրապետական աթոռներով, թեմերով և այլ միջոցներով նպաստելով ներգաղթի քարոզին: Եվ քանի որ սփյուռքահայերի մեծամասնությունն էջմիածնի և Անթիլիասի կաթողիկոսական աթոռներին պատկանող թեմերն էին կազմում, իսկ այդ տարիներին Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսները շատ համերաշխ ու համախոհ էին, ուստի եկեղեցու երկու թևերն էլ ամենուր պնդում էին, որ խորհրդային երկրում, իբր, կա հոգևոր ու եկեղեցական ազատ կյանք, որպեսզի հավատացյալ հայրենակիցներին համոզեն ներգաղթելու հայրենիք: Ինչու՞: Որովհետև Հայ առաքելական եկեղեցին հավատում էր հայոց հողերը վերադարձնելուն և, միաժամանակ, ապահովում էր իր գոյության իրավունքը ԽՍՀՄ-ում:

12. Հակառակ առաքելական եկեղեցու՝ կաթոլիկահայության հականերգաղթյան դիրքորոշումը լիովին արդարացված էր, ուստի շատ իրատեսական ու փաստարկված էին նաև կարդինալ Աղաջանյանի բոլոր կանխատեսումները, հատկապես, երբ այդ հայրենադարձությունը դիտարկվում է Հայ կաթողիկե եկեղեցու շահերի տեսանկյունից:

Գրականության ցանկում նշված են օգտագործված ուսումնասիրությունները, մամուլի, էլեկտրոնային կայքերի ու արխիվների նյութերը:

Հավելվածում ներկայացվում է Մեծ հայրենադարձի ու եկեղեցու կապի թեմայով մամուլի ընտրանու մատենագիտական ցանկը:

**Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.**

1. Հայրենադարձության առաջին փուլը խորհրդային Հայաստանում (1921-1936), «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, հ. 4 (57), Երևան, 2013, էջ 190-197:
2. Հայոց Մեծ հայրենադարձությունը պատմագիտության մեջ, «Սփյուռքագիտություն» տարեգիրք, Երևան, 2013, էջ 113-126:
3. Հայ առաքելական եկեղեցին և Մեծ հայրենադարձության պետական ծրագիրը, «Հայ աստվածաբան» գիտական հոդվածների ժողովածու, հ. 5, Երևան, 2013, էջ 140-153:
4. Հայ առաքելական եկեղեցու և խորհրդային իշխանության հարաբերությունները Գ. Չորեքչյանի տեղապահության տարիներին, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, հ. 1 (58), Երևան, 2014, էջ 52-70:
5. Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարք կարդինալ Աղաջանյանի զարգափարաբանական հակադրությունը Մեծ հայրենադարձի հարցում, «Հայագիտական հանդես», հ. 2 (26), Երևան, 2014, էջ 210-220:

ЕНГИБАРЯН АЙК КОЛЯЕВИЧ  
ВЕЛИКАЯ РЕПАТРИАЦИЯ И АРМЯНСКАЯ ЦЕРКОВЬ  
РЕЗЮМЕ

Диссертационное исследование посвящено выявлению роли Армянской церкви в деле осуществления массовой репатриации 1946-1948гг. Роль Армянской церкви в процессах Великой репатриации подвергается историко-эклизиологическому исследованию впервые. Если тема Великой репатриации 1946-1948гг. присутствует во многих историографических трудах, то она почти полностью отсутствует в экклизиологических исследованиях, тогда как без желания и участия Армянской церкви массовая репатриация просто не состоялась бы. Указывается, что смягчение отношения Советской власти к церкви было связано со Второй Мировой войной, когда И. Сталин вынужден был использовать также средства и возможности Армянской церкви. В условиях войны церковь получила возможность существования, ибо приобрела важность ее роль на антигерманском агитационном фронте, а также в организации Великой репатриации и формировании общественного мнения в поствоенных внешних отношениях.

Политической целью организации репатриации в историографии в основном связывают с возвращением армянских земель. В результате историко-эклизиологического исследования Великой репатриации выявляется политический «блеф» И. Сталина, заключающийся в том, что целью организации Советским государством репатриации было не предъявить, с использованием репатриации, территориальные претензии Турции, а наоборот – территориальная претензия была использована для организации репатриации.

Великая репатриация 1946-1948гг. была одной из программ поствоенной политики И. Сталина и целиком вытекает из той реалии, что после войны Советская страна оказалась в состоянии экономического хаоса и как воздух и вода нужно было вернуть в Советский Союз трудоспособных людей. И если в отношении военнопленных Советского Союза и советских граждан, приютившихся за рубежом можно было применить насильственную миграцию, то в случае с армянами это было невозможно, и И. Сталин поднимает вопрос возвращения Турцией армянских земель, прекрасно понимая, что для воодушевления армянства и привлечения в Советскую Армению необходим национальный фактор – территориальные требования армян.

В вопросе репатриации армянство Диаспоры разделилось на два противоположных полюса: с одной стороны, Армянская церковь с противоречиями апостольской и католической ветвей, с другой – политические партии с конфликтом дашнакцаканов и других просоветских сил. Благодаря совместным усилиям двух престолов Армянской Апостольской церкви дело было организовано лучше в Диаспоре, чем в принимающей Советской стране, где церковь уже не имела ни малейшего участия.

Внезапное прекращение Великой репатриации свидетельствует о том, что, в-первых, Советские власти достигли своей главной цели – привлекло необходимую численность рабочей силы, а затем, с началом «холодной» войны с Западом политика Сталинского «блефа» лишилась смысла.

Прекращение репатриации было неожиданно и для Армянской церкви, фактически оказавшейся, с одной стороны, «обманутой» властями, с другой – в роли невольной «введшей в заблуждение» армянство Диаспоры.

Потери, понесенные национальным генофондом в следствие Второй Мировой войны породили в стране глубокий кризис рабочей силы, и благодаря репатриации не только изменилась демографическая картина в стране, но и благодаря притоку профессиональной рабочей силы восстанавливается страна, стоявшая на грани кризиса. В лице репатриантов Советская Армения получила известных специалистов – квалифицированных инженеров, педагогов, врачей, крупных деятелей науки и культуры.

Великая репатриация, как государственная программа Советской империи, не была бы осуществлена в массовом порядке, не будь высокой степени участия Армянской церкви, поскольку только Армянская церковь способна была стать главным рычагом организации репатриации, своими престолами, епархиями и другими средствами способствуя пропаганде репатриации. И поскольку большинство армян Диаспоры составляли епархии, принадлежащие престолам Католикосатов Эчмиадзина и Антилиаса, а в те годы Католикос Всех армян и Католикос Великого Дома Киликийского были очень дружны и солидарны, обе ветви церкви повсюду утверждали, что в Советской стране якобы есть свободная духовная и церковная жизнь, дабы убедить верующих соотечественников репатрироваться на Родину. Почему? Потому, что Армянская Апостольская церковь верила в возвращение армянских земель, и в то же время обеспечивала свое право на существование в СССР. Позиция армян-католиков, вопреки Апостольской церкви выступавших против репатриации, была совершенно оправдана, посему совершенно реалистичны и аргументированы были также все прогнозы кардинала Агаджаняна, особенно когда репатриация рассматривалась с точки зрения интересов Армянской Католической церкви.

HAYK YENGIBARYAN

THE GREAT REPATRIATION AND THE ARMENIAN CHURCH

SUMMARY

This dissertation is devoted to discovering the role that the Armenian Church played in the massive repatriation that took place between the years of 1946 and 1948. For the first time, the role of the Armenian Church in the process of the Great Repatriation is being examined in terms of history and the church. Whereas the history

of the Great Repatriation of 1946-48 is a historical topic in many historiographical works, it has been practically overlooked in studies devoted to the Church. However, the massive repatriation would not have taken place if it was not for the desire and assistance of the Armenian Church. This dissertation shows that the appeasement of attitude towards the Armenian Church was linked to WWII when Stalin was forced to use the funds and resources of the Armenian Church as well. During the war, the Church managed to survive because importance was attached to the role of the Church in the anti-German front, as well as to the role in organizing the Great Repatriation and forming public opinion on foreign relations in the post-war era.

Historiographers mainly link the political goal for organizing repatriation to the return of the Armenians' lands. The examination of the Great Repatriation in terms of the Church helps reveal Stalin's political "bluff", meaning that the goal of the Soviet regime to organize repatriation was not to present Turkey with land claims through repatriation, but the opposite. The land claim was used to organize repatriation.

The Great Repatriation of 1946-48 was one of Stalin's post-war policy plans and completely derived from the fact that the USSR had found itself in economic turmoil after the war and needed to have workers return to the USSR. Whereas it was possible to organize the forceful immigration of prisoners of war of the Soviet Union and Soviet citizens having taken refuge abroad, in the case of the Armenians, it was impossible, and Stalin was raising the issue of the return of Armenians' lands from Turkey, knowing well that the national factor, that is, the Armenians' claims for lands was necessary in order to motivate the Armenians and bring them back to Soviet Armenia.

In relation to repatriation, the Armenians of the Diaspora were on opposite poles. On the one side it was the Armenian Church (Apostolic and Catholic), and on the other side were the political parties with the clash between the Dashnaks and other pro-Soviet forces. Thanks to the combined efforts of the two Sees of the Armenian Apostolic Church, everything was going well in the Diaspora and was better than in the receiving Soviet country where the Church did not have much participation already.

The sudden stop of the Great Repatriation shows that, first, the Soviet regime had accomplished its mission to bring the required amount of workers back, and secondly, Stalin's political "bluff" had already lost its meaning due to the start of the Cold War with the West.

The sudden stop of repatriation also came as a surprise for the Armenian Church, which had been "tricked" by the authorities on the one hand, and had "confused" the Diaspora Armenians on the other.

The loss of the gene pool of the nation following WWII had caused a big problem with the workforce in the country, and repatriation not only changed the demographic image of the country, but also, through professionals, helped restore the

country that was on the verge of a crisis. Thanks to repatriates, Soviet Armenia had renowned professionals, including high-quality engineers, educators, doctors, as well as great scientists and cultural figures.

The Great Repatriation would not have been a massive state plan of the Soviet regime if it was not for the high level of participation of the Armenian Church because only the Armenian Church could serve as the main lever for organizing repatriation as it advocated immigration through its Hierarchical Sees, Dioceses and other measures. Since the majority of Diaspora Armenians formed the Dioceses belonging to the Sees of the Catholicoses in Etchmiadzin and Antilias, and since the Catholicoses of All Armenians and of the Great House of Cilicia were in solidarity and supported each other, the two Dioceses of the Armenian Church claimed that there was, as they said, free church life in the Soviet country so that they could convince the faithful Armenians to immigrate to the homeland. Why? It was because the Armenian Apostolic Church believed in the return of the Armenians' lands and, at the same time, ensured the right to its existence in the USSR. Contrary to the Apostolic Church, the position of the Catholic Armenians against immigration was fully justified. Thus, all the predictions of Cardinal Aghajanyan were realistic and substantiated, especially when that repatriation is observed from the angle of interests of the Armenian Catholic Church.

